ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Կենսաթոշակային ապահովության ոլորտի լիազոր և իրավասու մարմինների ներկայացուցիչների խորհրդակցությանը մասնակցելու նպատակով Մոսկվա (Ռուսաստանի Դաշնություն) գործուղման արդյունքների վերաբերյալ

1. **Անունը, ազգանունը.**

Սմբատ Սահյան

2. **Զբաղեցրած պաշտոնը.**

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ

3. **Գործուղման վայրը և ժամկետները.**

Մոսկվա, Ռուսաստանի Դաշնություն, հոկտեմբերի 21.10.2019-23.10.2019թթ.

4. **Հրավիրող կողմը.**

Եվրասիական տնտեսական հանձնաժողով

5. **Գործուղման նպատակը.**

Մասնակցություն ԵՏՄ անդամ պետությունների կենսաթոշակային ապահովության ոլորտի ներկայացուցիչների խորհրդակցությանը և հաստատությունների ղեկավարների տեղակալների մասնակցությամբ տնտեսական և ֆինանսական քաղաքականության գծով Կոլեգիայի անդամ (նախարար) Տ. Մ. Ժակսիլսիկովի նախագահությամբ անցկացվելիք քննարկմանը

6. **Քննարկված թեմաները.**

1) «Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների աշխատողների կենսաթոշակային ապահովության մասին» համաձայնագրի (այսուհետ՝ Համաձայնագիր) անդամ պետություններում կազմակերպված՝ ներպետական ստորագրման գործընթացի արդյունքների ամփոփում և դրանց հիման վրա Համաձայնագրի նախագծում հնարավոր տեխնիկական բնույթի փոփոխություններ,

2) «Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների աշխատողների կենսաթոշակային ապահովության մասին» համաձայնագրի կիրառման կարգի» (այսուհետ՝ Կարգ) նախագծի լրամշակում

7. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.**

Հոկտեմբերի 22-ին և 23-ին (օրվա 1-ին կեսին) կայացած խորհրդակցությունները վարում էր Եվրասիական տնտեսական հանձնաժողովի աշխատանքային միգրացիայի և սոցիալական պաշտպանության վարչության պետ Պ. Ու. Սույունբաևան:

Խորհրդակցությունների առաջին օրը՝ հոկտեմբերի 22-ին ԵՏՄ անդամ պետությունների կենսաթոշակային ապահովության ոլորտի ներկայացուցիչները ներկայացրեցին տեղեկատվություն Համաձայնագրի նախագծի՝ ներպետական համաձայնեցման գործընթացի արդյունքների վերաբերյալ:

Կողմերը տեղեկացրեցին, որ ըստ էության ավարտել են ներպետական համաձայնեցման գործընթացը, բացառությամբ Ռուսաստանի Դաշնության:

Քննարկվեցին նաև Համաձայնագրի նախագծում տեխնիկական բնույթի փոփոխությունների հնարավորությունը:

Հստակեցվեցին հաջորդ օրը կենսաթոշակային ապահովության ոլորտի ղեկավարների տեղակալների մասնակցությամբ տնտեսական և ֆինանսական քաղաքականության գծով Կոլեգիայի անդամ (նախարար) Տ. Մ. Ժակսիլսիկովի նախագահությամբ քննարկվելիք հարցերը:

Քննարկվեցին նաև Կարգի նախագծի՝ կողմերի միջև դեռևս չհամաձայնեցված դրույթները, կենսաթոշակի արտահանման մեխանիզմների վերաբերյալ դրույթի Միջպետական բանկի առաջարկվող խմբագրությունը, ինչպես նաև հավելվածները (ձևաչափերը), որոնց միջոցով փոխանակվելու է Համաձայնագրի կիրարկման համար անհրաժեշտ տեղեկատվությունը:

Հարկ է նշել, որ Կարգի նախագծի 9-րդ (վերաբերում է ստաժի վերաբերյալ փոխանակվող տեղեկատվության ծավալին) և 25-րդ (վերաբերում է կենսաթոշակը վճարելու ծախսերին) կետերի վերաբերյալ կողմերի միջև համաձայնություն ձեռք չբերվեց:

Հոկտեմբերի 23-ին (օրվա 2-րդ կեսին) կազմակերպված քննարկմանը պարոն Տ. Մ Ժակսիլիկովը տեղեկացրեց Համաձայնագիրը ստորագրելու նախանշված ժամկետը՝ 2019 թվականի դեկտեմբերի 20-ը, ինչին նախորդելու է Համաձայնագրի նախագծի ստորագրումը կենսաթոշակային ապահովության ոլորտի ղեկավարների տեղակալների կողմից:

Նա մեկ անգամ ևս առանձնացրեց և մասնակիցների քննարկմանը ներկայացրեց ԵՏՄ անդամ պետությունների ներպետական ստորագրման գործընթացի արդյունքներով ներկայացված այն առաջարկները, որոնք, պայմանավորված իրենց տեխնիկական-խմբագրական բնույթով, Համաձայնագրի նախագծի մշակման այս փուլում հնարավոր է կատարել (այս փոփոխությունների կատարումը չի պահանջում Համաձայնագրի ներպետական ստորագրման նոր գործընթացի անցկացում):

Հայկական կողմի առաջարկությամբ քննարկվեց ՌԴ ներպետական ստորագրման գործընթացի արդյունքներով ներկայացված առաջարկություններից մեկի (Համաձայնագրի նախագծի 2-րդ հոդվածում)՝ տեխնիկական-խմբագրական բնույթի լինելու հարցը: Նշվեց, որ առաջարկության իրականացումը Համաձայնագրի նախագծում, որի արդյունքում 2 տարբեր ենթակետերի միավորումը մեկ ենթակետում, չի կարող դիտվել որպես տեխնիկական փոփոխություն:

Պարոն Տ. Մ Ժակսիլիկովի առաջարկությամբ որոշվեց հարցը մեկ անգամ ևս քննարկել իրավաբանների հետ:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Հոկտեմբերի 23-ին կազմակերպված քննարկման արդյունքներով որոշվեց՝ ԵՏՄ անդամ պետությունների ներպետական ստորագրման գործընթացի արդյունքներով ներկայացված առաջարկությունների հիման վրա Համաձայնագրի նախագծում կատարել համապատասխան փոփոխություններ, իսկ Համաձայնագրի նախագծի 2-րդ հոդվածի մասով ՌԴ առաջարկի տեխնիկական-խմբագրական բնույթը մեկ անգամ ևս քննարկել իրավաբանների հետ:

Կարգի նախագծի քննարկման արդյունքներով որոշվեց՝ շարունակել նախագծի մշակման աշխատանքները: Ներկայացված առաջարկությունների, համաձայնեցված մոտեցումների հիման վրա խորհրդակցության արձանագրությամբ սահմանված ժամկետում հանձնաժողովը կլրամշակի կարգի նախագիծը և կարծիքի կուղարկի կողմերին, որոնք դրա վերաբերյալ իրենց դիրքորոշումը կներկայացնեն հանձնաժողովին:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Առաջարկությունները հանձնաժողով կներկայացվեն գրավոր՝ կենսաթոշակային ապահովության ոլորտի լիազոր և իրավասու մարմինների ներկայացուցիչների խորհրդակցության, ինչպես նաև կենսաթոշակային ապահովության ոլորտի ղեկավարների տեղակալների մասնակցությամբ կայացած քննարկման արձանագրությունների համաձայն՝ դրանցում նշված ժամկետներում:

10. Ստորագրությունը, ամսաթիվը:

28.10.2019թ